ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/43

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01564583) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով «բժշկական պարագաների» գնման ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը: Ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով պատասխանատու տորաբաժանման կողմից ներկայացված համապատասխան մասնագիտական եզրակացությունները՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին (համարժեք չեն): Մասնակիցը ծանուցվել է դրա վերաբերյալ, և վերջինիս առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը որպես շտկում սահմանված կարգով ներկայացրել է նոր տեխնիկական բնութագիր և պարզաբանումներ, որոնք նույնպես հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք և մասնակցի հայտը մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. <u>«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն 22.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պաշտոնական ընթացակարգի կապակցությամբ ընկերությունը ներկայացնում է առարկություններ, գտնում ենք, որ հիմքեր չկան ընկերությանը Ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին:

Ընթացակարգի արդյունքում ընկերությունը ընթացակարգի 39, 76, 77, 79 և 80 չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից և վերջինիս առաջարկվել է ներկայացնել Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Պահանջված փաստաթղթերն Ընկերության կողմից ուղարկվել են ՀՀ ՊՆ-ի կողմից նշված g.tovmasyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Այնուհետև Պատվիրատուի կողմից արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ստորագրված չեն կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից և կնքված չեն, բացի այդ, արձանագրվել են մի շարք տեխնիկական առանձնահատկություններ, որոնց համար ընկերությանը տրվել է դրանք շտկելու հնարավորություն:

Ընկերությունը ծանուցման ստացման հաջորդ օրը շտկել է Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և կրկին վերը նշված էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկել է Պատվիրատուին: Ընկերության համար անհասկանալի է, թե ինչու ՀՀ ՊՆ-ն չի ստացել շտկված տարբերակով ուղարկված էլեկտրոնային նամակը:

«Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն դիմել է ընկերությանը սպասարկող ինտերնետային օպերատորին, որպեսզի վերջինս տրամադրի համապատասխան տեղեկատվությունն այն մասին, որ ընկերությունը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը և մինչ օրս սպասում է պատասխանի:

Սակայն ընկերությունը ցանկանում է նշել ևս մեկ փաստ այն մասին, որ եթե նույնիսկ չապացուցվի այն համգամանքը, որ «Մարիյա Մեդ Քo» ՍՊԸ-ն համապատասխան ժամկետում ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակն, ապա գտնում ենք, որ ընկերությունը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում, քանի որ.

ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, ինչը նախատեսված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (2010թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ 206-Ն օրենք) և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համապատասխան: Ըստ «Գնումներ մասին» գործող օրենքի 57-րդ հոդվածի՝

3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

4-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի և «Գնումների մասին» ՀՀ 2010թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում պետության կնքած այն փոխըմբռնման հուշագրերով և նախնական պայմանագրերով նախատեսված գործարքների վրա, որոնց վերաբերյալ վերջնական պայմանագրերը պետք է կնքվեն նույն օրենքն ուժի մեջ մտնելուց երկու տարվա ընթացքում:

Այսպիսով, վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը պետք է քննվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենք) պահանջներին համապատասխան, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-206-Ն օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Տվյալ պարագայում «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին վերը նշված ցուցակում ներառելու համար անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը ավելի քան մեկ անգամ խախտի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը կհանգեցնի հետագա մասնակցության դադարեցմանը, իսկ տվյալ պարագայում, եթե նույնիսկ ընդունենք, որ Ընկերությունը չի շտկել և չի ներկայացրել Պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և դա դիտվել է որպես պարտավորության խախտում, ապա այս պարագայում Ընկերությանը Ցուցակում ներառելու համար արդեն անհրաժեշտ է նմանատիպ ևս մեկ խախտման առկայություն, այն է՝ հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Բացի այդ, ցանկանում ենք անդրադարձ կատարել ևս մեկ փաստացի ապացույցի, այն է՝ ՀՀ ՊՆ-ի <ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Մարիյա Մեկ Քո» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ Պատվիրատուն գնման ընթացակարգը հայտարարել է ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16 տողով այն է՝ բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ տողով, սակայն Ընկերությունը նշված ծածկագրով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ չուներ կնքված շրջանակային համաձայնագիր (տես՝ www.gnumner.am կայք, շրջանակային համաձայնագրեր կնքված և 01/04/2015թ. գործող շրջանակային համաձայնագրեր Ապրանքներ (Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ), ինչն էլ պետք է արձանագրվեր Պատվիրատուի կողմից և անմիջապես մերժվեր ընկերության հայտը, իսկ ընկերության հայտը մերժելու պարագայում վերջինս չէր ճանաչվի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և արդյունքում չէր խախտի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչը և հանգեցրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեզ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արիս Շահդարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/43 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)

30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3 և 31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից ներկայացված եզրակացությունը Ընթացակարգի մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ, Ընկերության 22.09.2017թ. և ներկայացված դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 39, 76, 77, 79 և 80 չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (39, 76, 77, 79 և 80) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Հանձնաժողովը 30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ 39-րդ, 76-րդ, 77-րդ, 79-րդ և 80-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի վերը նշված չափաբաժինների մասով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը սահմանվել են հետևյալ կերպ.

39. Մաշկի ստեպլեր PMR 35 3,9մմ, 5,7մմ, ֆիքսված աշխատող մասով N6, Ethicon-Endo /Վիրահատական վերքի մաշկի կարման համար նախատեսված մեխանիկական կարող սարք: Աշխատող հատվածը պետք է զինված լինի մաշկի վրա աշխատող հատվածի ճիշտ տեղադրման համար նախատեսված ցուցիչով: Լիցքավորված չժանգոտվող պողպատից 35 սեղմակներով, որոնք պատված են հյուսվածքների հետ շփման գործակիցը և կպչունությունը իջեցնող հատուկ ծածկույթով, որը նպաստում է հեշտ տեղադրմանը և

հեռացմանը: Գլխիկի տրամագիծը 0.53մմ, սեղմակի արմատի լայնությունը 5.7մմ, սեղմակի բարձրությունը փակված վիճակում 3.9մմ: N6 ստերիլ գործարանային փաթեթավորումով տուփեր:

76. Ցիրկուլյար կարող կտրող գործիք/Ցիրկուլյար կարող կտրող գործիք 29 մմ կամ համարժեք: Ունի ցողունով հանվող տափակեցված գլխիկ: Ցողունի վրա առկա է զսպանակային արգելակիչ .կիսետային կապը կապելու ակոսիկ եկ կտրվող ներդիր: Առկա է կտրված հյուսվածքների տեղակայման համար նախատեսված տեղամաս, ինչպես նաև ներկառուցված տրոակար որի վրա առկա է լրիվ դուրս բերման մակնշում: Գործիքի վրա առկա է հյուսվածքների սեղղման սանդղակ,բացվածքի կարգավորման բռնակ, կարելու բռնակ և կանխարգելիչ: Կոմպլեկտավորվում է լրացուցիչ պլաստիկ տրոակարով հանվող գլխիկի համար և տրոակարի համար նախատեսված պլաստիկ ծածկիչով: Գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում մնում է կալիբրավորված չփոփոխվող տարածություն 1 մմ չափով: Հյուսվածքների սեղմման սանդղակը ունի բրանշերի ճիշտ առբերման դիապազոն ոչ պակաս քան 7 մմ, ինչպես նաև մարկերային երիզներ: Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռետինապատ չսահող մակերես: Աշխատանքային մասի տրամագիծը ոչ ավել քան 29 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը ոչ պակաս քան 20,4 մմ , թեք ցողունի երկարությունը 18 սմ Առկա է գործիքի արագ բացման և փակման մեխանիզմ և կարելու ձայնային և տակտիլ վերահսկողության մեխանիզմ: Գործիքը լիցքավորված է ոչ ավել քան 24 սեղմակներով տեղակայված շախմատաձև և շրջանաձև երկու շարքով: Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից Ti6Al 4V /90%տիտան 6% ալյումի 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործելու համար մատակարարվում է ստերիլ: N1 ստերիլ գործարանային փաթեթավորումով:

77. Ցիրկուլյար կարող կտրող գործիք/կապը կապելու ակոսիկ և կտրվող ներդիր: Առկա է կտրված հյուսվածքների տեղակայման համար նախատեսված տեղամաս, ինչպես նաև ներկառուցված տրոակար որի վրա առկա է լրիվ դուրս բերման մակնշում: Գործիքի վրա առկա է հյուսվածքների սեղղման սանդղակ,բացվածքի կարգավորման բռնակ, կարելու բռնակ և կանխարգելիչ: Կոմպլեկտավորվում է լրացուցիչ պլաստիկ տրոակարով հանվող գլխիկի համար և տրոակարի համար նախատեսված պլաստիկ ծածկիչով: Գործիքը ամբողջությամբ փակելու դեպքում մնում է կալիբրավորված չփոփոխվող

տարածություն 1 մմ չափով: Հյուսվածքների սեղմման սանդղակը ունի բրանշերի ճիշտ առբերման դիապազոն ոչ պակաս քան 7 մմ, ինչպես նաև մարկերային երիզներ: Հիմնական բռնակը և կարելու բռնակը ռետինապատ չսահող մակերես: Աշխատանքային մասի տրամագիծը ոչ ավել քան 33 մմ, ներկառուցված սայրի տրամագիծը ոչ պակաս քան 24,4 մմ , թեք ցողունի երկարությունը 18 սմ: Առկա է գործիքի արագ բացման և փակման մեխանիզմ և կարելու ձայնային և տակտիլ վերահսկողության մեխանիզմ: Գործիքը լիցքավորված է ոչ ավել քան 28 սեղմակներով տեղակայված շախմատաձև և շրջանաձև երկու շարքով: Լարի տրամագիծը ոչ պակաս քան 0,28 մմ, սեղմակի պսակի լայնությունը ոչ ավել քան 4,0 մմ, բաց սեղմակի բարձրությունը ոչ պակաս քան 5,5 մմ, փակ սեղմակի բարձրությունը կարգավորվող 1,0 ից 2,5 մմ: Սեղմակները տիտանային համաձուլվածքից/90%տիտան 6% ալյումին 4% վանադիում/ ՄՌՏ համատեղելի: Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործելու համար, մատակարարվում է ստերիլ՝ N1 ստերիլ գործարանային փաթեթավորումով:

79. Տիտանային ամրակներ N108 (միջին-մեծ)/ LT300 Ethicon-Endo մակնիշի կամ համարժեք տիտանային համաձուլվածքից ամրակներ միջին-մեծ, դիստալ փակման ձևով, 2, 5 – 4 մմ անոթների համար բացած վիճակում 5,5 մմ, փակած վիճակում 8,7 մմ Պետք է ունենա երկարությամբ ձգվող և զուգահեռ ակոսիներ ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Համատեղելի լինեն Էթիկոն ֆիրմայի կլիպսերի տեղադրման գործիքների հետ: Արտաքին մակերեսին պետք է ունենա ակոսիներ՝ համապատասխանող ամրակների սեղմակներին, սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N108 ստերիլ գործարանային փաթեթավորումով:

80. Տիտանային ամրակներ N108 (մեծ)/ LT400 Ethicon-Endo մակնիշի կամ համարժեք տիտանային համաձուլվածքից ամրակներ մեծ, դիստալ փակման ձևով, 5,5 – 7,5 մմ անոթների համար բացած վիճակում 8 մմ, փակած վիճակում 12 մմ: Պետք է ունենա երկարությամբ ձգվող և զուգահեռ ակոսներ ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Համատեղելի լինեն Էթիկոն ֆիրմայի կլիպսերի տեղադրման գործիքների հետ: Արտաքին մակերեսին պետք է ունենա ակոսիներ համապատասխանող ամրակների սեղմակներին սեղմակները պետք է լինեն ՄՌՏ համատեղելի: N108 ստերիլ գործարանային փաթեթավորումով:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N5 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրն ըստ համապատասխան չափաբաժինների:

31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 16.06.2017թ. տրված մասնագիտական եզրակացությունները, արձանագրել է, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել որպես համարժեք նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը և հրավերի հավելված N5-ը:

Նույն արձանագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են պահանջված փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը ստորագրված և կնքված չեն կազմակերպության համապատասխան պաշտոնատար անձանց կողմից, բացակայում է նաև էլեկտրոնային ստորագրությունը: Միաժամանակ, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից Հանձնաժողովը պարզեց, որ.

Չափաբաժին 39/Մաշկի ստեպլեր ֆիքսված աշխատանքային մասով՝ կազմակերպքության կողմից ներկայացված բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանված բնութագրերին:

Չափաբաժին 76 և 77/ Ցիրկուլյար կարող գործիքներ/՝ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն կարող համարվել համարժեք, քանի որ երկու դեպքում էլ սարքի ցողունի

երկարությունը 17,6 սմ է՝ պահանջվող 28 սմ փոխարեն, որը սահմանափակում է վիրաբույժի աշխատանքն ուղիղ աղիքի ավելի խորքային հատվածների վրա:

Չափաբաժին 79 և 80 /Տիտանային ամրակներ N108 միջին-մեծ և մեծ/՝ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն կարող համարվել համարժեք, քանի որ կազմակերպության կողմից նշվում է, որ ամրակները համարժեք չեն առկա գործիքներին և անհատույց կտրամադրվի տեղադրման գործիքն, այնինչ ամրակների տեղադրման համար անհարաժեշտ գործիքները բացի այն, որ առկա են ՀՀ ՊՆ և ՊԲ բոլոր հոսպիտալներում, տարբերվում են նաև իրենց կիրառման ոլորտով (կարող են լինել ինչպես լապորոսկոպիկ, այնպես բաց վիրահատությունների համար, ուղիղ կամ թեք ծայրով, տարբերվում են իրենց երկարություններով):

15.09.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությամբ հայտնած դիրքորոշումն այն մասին, որ Ընկերության հայտը մերժվել է վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերն ստորագրված և կնքված չլինելու, ինչպես նաև տեխնիկական բնութագրերի հրավերով սահմանված պահանջներին արձանագրված անհամապատասխանությունները սահմնված ժամկետում չշտկելու հիմնավորմամբ:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովը 21.06.2017թ. Ընկերությանն ուղարկված ծանուցմամբ առաջարկել է վերջինիս շտկել նշված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով լրացուցիչ տեղեկատվություն, սակայն Ընկերությունը չի կատարել նշված շտկումը:

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ–ի ներկայացուցիչը պնդեց 22.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ ներկայացված դիրքորոշումը և հավելեց, որ ի պատասխան Պատվիրատուի ծանուցմանը, վերջինիս ներկայացրել է հավելված N 5-ով նախատեսված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը, որն Ընկերության համար անհասկանալի պատճառներով չի հասել Պատվիրատուին: Նշված հարցի պարզաբանման համար Ընկերությունը դիմել է նաև «Մարիյա Մեդ Քо» ՍՊԸ-ին սպասարկող ինտերնետային օպերատորին, որպեսզի վերջինս տրամադրի համապատասխան տեղեկատվությունը:

Միաժամանակ, Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ–ն՝ չհանդիսանալով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ «Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ»-ի գծով շրջանակային համաձայնագիր

կնքած մասնակից, չուներ Պատվիրատուի կողմից շրջանակային համաձայնագիր կնքելու միջոցով կազմակերպված ընթացակարգին մասնակցելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունք, հետևաբար, Ընկերության հայտը այդ հիմնավորմամբ պետք է ի սկզբանե մերժվեր Պատվիրատուի կողմից, որպիսի պայմաններում ի հայտ չէին գա այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել Ընկերության նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգը նախաձեռնելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը.
- 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ (...)տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.
- 37-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը, էլեկտրոնային եղանակով, քարտուղարը միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի

3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով.

• 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

• 49-րդ կետի համաձայն՝ (...) ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 82-րդ կետի համաձայն՝ սահմանված կարգով կազմված դիմումը գնումների աջակցման կենտրոն մուտքագրվելու կամ էլեկտրոնային եղանակով ստացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների աջակցման կենտրոնը մասնակցի հետ կնքում է շրջանակային համաձայնագիր և այն կնքելուն հաջորդող աշխատանքային օրը հրապարակում է www.gnumner.am կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.tovmasyan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի 7.7 կետի համաձայն՝ (...)հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված

փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, որ հայտով ներկայացված՝ հավելված N5-ով նախատեսված տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերության կողմից չեն շտկվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ հայտը ներկայացնելու պահին Ընկերությունը չի հանդիսացել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16» ծածկագրով (Բժշկական սարքավորումներ, գործիքներ և պարագաներ) ապրանքների գծով 01.04.2015թ. գործող շրջանակային համաձայնագիր կնքած հնարավոր մասնակից:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու համապատասխան որոշումներ ընդունելով՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն՝ չունենալով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ «ԳԱԿ-

ՇՀԱՊՁԲ-15/16» ծածկագրով գործող կնքված շրջանակային համաձայնագիր, չէր կարող հանդիսանալ Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ